

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԱՍՆԱՐՈՒԾՈՒԹԻՒՆ.

ՄԵԾ ԵՂՋԻՐԱՒՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ.

(Շարունակ—ԲԷ—)

Աւստրոգ եզների եւ կովերի կերր. Չափաւոր աշխատութեան եւ կամ ձմեռը պարապ ժամանակ եղները սակաւ անոնդի պահանջ են զգում: Միայն սաստիկ աշխատութեանց ժամանակ պէտք է ուշադիր լինել կանոնաւորելու նրանց կերը: Իսկապէս աշխատութեան ժամանակ եւ եղները համեմատաբար պակաս անոնդաբար նիւթեր են պահանջում, մանաւանդ եթէ համեմատելու լինինք ձկների հետ: Աւելի չնչին եւ բոլորովին անզգալի կլինի այս աշխատաւոր անասունների վերայ եղած ծախքը, եթէ կան հարուստ արօտատեղիներ: Կովերն եւ շատ անգամ ծառայում են թէ իբրեւ աշխատաւոր եւ թէ իբրեւ կաթնատու կենդանի: Աղքատ երկրագործներն համար սա մի խնայողական միջոց է: Մատաղ կովերի աշխատութիւնը պէտք է չափաւոր լինի. չպէտք է չարաչար աշխատեցնել, որովհետեւ կենդանին այդ հասակի մէջ դեռ բոլորովին դարգացած չէ լինում:

Աշխատութեանց միջոցին, նախ քան կերակրելը, եզներին պէտք է մի քիչ ժամանակ հանգիստ տալ, որպէս զի բոլորովին հանգիստ դրութեան մէջ նորա մօտենան կերին. նոյն իսկ աշխատելիս աւելի կամ պակաս չափով պէտք է հանգիստ տալ կենդանուն: Հակառակ դէպքում, բացի ութաթափ լինելուց, որ անուղղելի կարող է մնալ, կենդանու սիրտը կլայնանայ, շնչարգելութիւն յառաջ կգայ եւ վերջապէս արիւնը կարող է թունաւորուել: Մանաւանդ շատ չպէտք է տանջել եզներին խոնաւ սեահողի եւ կամ առհասարակ փափուկ հողի վերայ աշխատելիս, որովհետեւ նոցա վիզը կարող է սաստիկ վնասուել:

Կերակրելիս կարեւոր է ուշը դարձնել, թէ արդեօք անոնդաբար նիւթերից որո՞նք են մկաններին ուժ տալիս: Իսկապէս կերերի երեք բաղադրիչ մասերն էլ պէտքական են դորա համար, բաց ամենից աւելի սպիտակուցը, որովհետեւ մկանները բաղկացած են հէնց այդ նիւթից, որ աշխատութեան ժամանակ ծախսուում է. իսկ ծախսածի տեղ նորը պէտք է տալ: Ահա այս պատճառով կարեւոր է, որ եզներն կեր լինեն սպիտակուցով հարուստ անոնդաբար նիւթերը: Միակ նպատակայարմար անոնդաբար

կերբ, որ կարող է ոչ թե տալ աշխատող կենդանուն՝ միջակ յատկութիւն ունեցող մարդագետնի չոր խոտն է. առւոյտով և կամ որևէ ուրիշ տեսակ խոտով կերակրելիս հարկաւոր է յարգ ևս տալ. եթէ կարելի է ձեռք բերել, օգտակար է գործածել նաև մանրած արմատապտուղներ, բամբակի կոտ և դարեջրի դիրտ կամ տինուցը: Գարնանը, ամռանը և աշնանը, երբ գաշտում կանաչ կեր շատ կայ, եղներին փոխ առ փոխ աշխատեցնելով բաւական կլինի միայն կանաչ խոտ տալ. բայց եթէ կենդանիները ստիպուած են առանց փոփոխուելու ամբողջ օրը աշխատել, հարկաւոր է կանաչ կերի վերայ աւելացնել նաև չոր կեր: Ընչպէս օրինակ՝ յարգ կամ չոր խոտ: Չոր խոտ չեղած ժամանակ կարելի է գործածել դարեջրի դիրտ կամ տինուցը կամ կոպտն (ЯМЫХИ):

Մատաղ կենդանիներին տրուած կերը ոչ միայն աշխատութեան միջոցով կորցրածի տեղը պէտք է լցնէ, այլ նաև մարմինը դարգացնէ. այդ պատճառով սոցա պէտք է աւելի անդադար կերեր տալ, ընչպէս օրինակ, դարի, վարսակ, եղիպտացորեն և այլն: Ինչ վերաբերում է յարգին, սորա քանակը պէտք է մեծանայ կենդանեաց աճելու հետ միասին:

Եղներին ձմեռը պարապ ժամանակներում պէտք է թեթեւ կերակրել. բայց թեթեւ առելով չպէտք է խեղճերին այնքան դրուկել, որ նորա նուաղեն, մաշուեն. հակառակ դէպքում դարնանը, որպէսզի նորա ընդունակ լինեն աշխատելու՝ հարկաւոր կլինի անհամեմատ մեծ չափով կեր գործածել: Բայց դրանից, որովհետև վերջի վերջոյ աշխատաւոր եղներին անպէտքացած ժամանակ պէտք է գիրացնել իրեն մոացու՝ այդ պատճառն էլ աչքի առաջ ունենալով, ձմեռը պարապ ժամանակ նոցա պէտք է բաւականաչափ կերակրել լաւ դարնանացանք յարդով. բայց աւելի օգտակար կլինի յարգի երրորդ մասի տեղ խոտ տալ և կամ յարգի վերայ աւելացնել դարեջրի դիրտ կամ տինուցը և կամ ամէն մի գլուխ անասունին 2—3 զրուանքայ քուսպ (կոպտն), վարսակ:

Գարնանային անդադար և ծանր աշխատութեանց միջոցին 1000 գրուանքայ (25 փ.) կենդանի կշիռ ունեցող եզի կերը պէտք է բարձրացնել և տալ գոնէ մինչև 35 գրուանքայ լաւ չոր խոտ և կամ 25—30 գրուանքայ միջակ յատկութեամբ խոտ և 1 1/2 գարնց * վարսակ և կամ մի այլ տեսակ հատիկ:

Աշխատաւոր եղներին կերակրելիս անհրաժեշտ է պահպանել

* ուսպ, ուլիկ, անուխ:

մի քանի կանոններ: Ամէն անգամ եղներին նախ քան ծանր աշխատութեանց ենթարկելը երկու շաբաթ առաջ պէտք է լաւ կերակրել սննդարար նիւթերով. որովհետեւ այդ կերպ ամրացած կազմուածքը նոյն խիւ ամենաեռանդուն և ծանր աշխատութեանց միջոցին չի թուլանայ, չի նուազի: Ինչպէս աշխատելուց առաջ, նոյնպէս և կարճատեւ հանգստութեան միջոցին պէտք է աւելի զիւրամարս և սննդարար կեր տալ: Երբէք չպէտք է կերակրել նոցա խիստ կոշտ ու կոպիտ, դժուարամարս նիւթերով, որոնցից կենդանու ստամոքսը և աղիքները սասալիկ լցոււմ, ուռչոււմ են:

Ինչպէս կաթնատու կովերին, նոյնպէս և աշխատաւոր անասուններին պէտք է ամենայն օր որոշ քանակութեամբ աղ տալ: Եղների համար չափ է $2\frac{1}{2}$ —3 լոտ, որ տարեկան անուժ է $28\frac{1}{2}$ —35 գրուանքայ: Մի խումբ եղներին միասին աղ տալիս, պէտք է իւրաքանչիւր 6 փութ կենդանի կշռի համար որոշել $1\frac{1}{2}$ —2 մսխալ:

Մսացու մեծ եղիւրաւոր անասունների կերը. Մսացու մեծ եղիւրաւոր անասուններին կերակրել՝ նշանակուժ է աշխատել կեր տալով նոցա մարմնի մէջ հնար եղածին չափ մեծ քանակութեամբ միս և ճարպ հաւաքելու: Այս նպատակով անասուններ պահողը պէտք է խմանայ, թէ ի՛նչ սննդարար նիւթերից կենդանու մարմնի մէջ կարող է միս և ճարպ գոյանալ:

Մսացու անասուններին գիրացնելու համար նախ և առաջ պէտք է աչքի առաջ ունենալ կենդանու անհատական առանձնայատկութիւնները, որոնք խիստ կարեւոր նշանակութիւն ունին, որովհետեւ կան կենդանիներ, որ 3 փութ կերից իւրեանց մարմնի կշիւը աւելացնում են 7—8 գրուանքայով և կան կենդանիներ, որ միայն 2—3 գրուանքայով. այս դէպքում ևս տեսակի ընտրութիւնը նոյնքան կարեւոր է, որքան կարեւոր էր կաթնատու, առողջ, լաւ աշխատաւոր եղիւրաւոր անասուններ ընտրելիս: Կան այնպիսի մեծ եղիւրաւոր անասուններ, որոնց կերի սննդարար նիւթերը, շնորհիւ մարտողական գործարանի խիստ զարգացման, արագութեամբ միս են դառնում և այդպիսով կենդանու կշիւը աւելացնում. ահա այդպիսիները ձեռնտու են գիրացնելու և նրանց ապագայում վաճառքի հանելիս մեծ շահ կստացուի: Իսկապէս այդ տեսակ կենդանիները ծնելու օրից սկսած համարեաւ լաւ են կերակրոււմ, այդ պատճառով էլ մեծացած ժամանակ տրամադիր են գիրանալու: Սոցա մէջ կերի մսի և ճարպի փոխուելու ընդունակութիւնը այն աստիճան զարգացած է լինում, որ $1\frac{1}{2}$ —2 տարեկան հասակում անչափ մսա-

լից են դառնում: Սովորաբար այսպիսիներն միտք խիստ քնքոյշ և համեղ է լինում, այդ պատճառով էլ սորա համեմատաբար աւելի մեծ գին են ունենում:

Գիրացնելու համար ամենալաւ հասակը շուտ հասունացողներն են հատմամբ համարւում է երկու տարեկանից ի վեր, իսկ դանդաղ հասունացողներն՝ չորս տարեկանից ոչ պակաս: Մեծացած, նոյն իսկ ծեր 9—10 տարեկան եղներն ու կովերը դանդաղ են գիրանում և տալիս են կոպիտ բնաթել ու կոշտ միս: Մեղանում գիւղացիների համար խիստ ձեռնտու է գիրացնել պակասութիւն ունեցող եղները և կովերը և ապա վաճառել: Որովհետեւ ծերացած եղջիւրաւոր անասունները դժուարութեամբ են գիրանում, այս պատճառով աննպատակ կլինի այդպիսիներին երկար ժամանակ կանոնաւոր կերակրել և ծախքեր անել:

Գիրացնելու համար խոշոր եղջիւրաւոր անասունները բնորոշիւ պէտք է ամենից աւելի ուշադրութիւն դարձնել կենդանու մարմնի և մանաւանդ բնի կազմուածքի վերայ, որովհետեւ նորա ձեւից կախումն ունի կենդանու պարարտանալու բնդունակ լինելը: Կենդանու բունը պէտք է լինի երկար, և եթէ նորա մի որեւէ մասից հաստութեամբ կտրենք, պէտք է մօտաւորապէս քառակուսի ձև ստացուի: Կենդանու ջնշին գին ունեցող մասերը՝ գլուխը, պարանոցը, սաները պէտք է բարակ և մանր լինեն, կաշին բարակ, փափուկ, առածդական. այդ նշան է, որ կաշուի տակի խորշանիւթերը սաստիկ զարգացած են, այս պատճառով էլ շատ ճարպ կհաւաքուի: Կաշին ծածկուած պէտք է լինի փափուկ պառկած և հարթ մաղերով: Բայց եթէ կաշին թոյլ է և հաստ, վերայի մազերը հաստ ու երկայն են, իսկ մարմինը երկայն ու բարակ, այդպիսի կենդանին հեշտութեամբ չի գիրանայ: Գիրացնելու կենդանին պէտք է հէնց սկզբից չափաւոր գէր լինի, երակը կանոնաւոր խփէ, աչքերը փայլուն և ուտելու ցանկութիւնը չափաւոր լինի:

Եթէ մացուի համար ընտրած եղջիւրաւոր անասունները սաստիկ աշխատելուց և կամ վատ կերակրուելու պատճառով նիհար են մնացել, հարկաւոր է մի առ ժամանակ լաւ կերակրել դիւրամարս նիւթերով, որպէս զի քիչ միս հաւաքեն, և նոցա մարսողական դործարանները սովորեն ընդունելու, մարտելու և իւրացնելու աւելի մեծ չափով սննդաբար նիւթեր, առանց որի գիրացնելու նպատակով դործ դրած կերը թանգ կնստի և գիւգացումը երկարատեւ կլինի: Միմիայն այսպիսի նախապատրաստական միջոցներ դործադրելուց յետոյ պէտք է ձեռք դարկել զօրեղ միջոցներէ: Այս շրջանը կտևի 2—3 շաբաթ:

Այսպիսի ժամանակ իրեն հեր գործածուող նիւթերից ամենից աւելի գործածականներն են՝ թէ չոր և թէ հանաչ խոտերի այլ և այլ տեսակները (մանաւանդ մարդագետնի), աււոյաբ*, գետնախնձորը, բադուկը (ճակնդեղ, տակ), հացահատիկները՝ խոշոր աղացած գարին, վարսակը, կոպտոնը (քուսպ) և այլն:

Եղջիւրաւոր անասուններին գիրացնելու համար բայց նախապատրաստական կերից, պէտք է երկու տեսակ կեր ևս տալ: որով գիրացնելը երեք շրջան է ունենում: Նախապատրաստական սնուցման նպատակն այն է, որ նիհար կենդանին միւս բռնի գորա համար պէտք է առլ կոշտ, բայց սննդարար նիւթեր: Յետոյ սկսւում է երկրորդ շրջանը* այդ ժամանակ մտաւ կենդանուն պէտք է որոշ չափով գիրացնել. պէտք է առլ ծաւալով մեծ նիւթեր, բաւականաչափ խոտ, գարնանացանի յարդ՝ ալիւրի կամ քուսպի հետ խառն* մի խօսքով խոշոր նիւթերով հարուստ և ճոխ կերեր: Վերջին՝ երրորդ, շրջանում պէտք է ուտացնել աւելի համեղ և զօրեղ կեր, հարուստ մանաւանդ սպիտակուցով, օրինակ՝ քուսպ, արմատապտուղներ, թեփով և գարի ալիւրով պատրաստած լափ, խնչպէս և կարտոֆիլ: Այս շրջանում կենդանին պէտք է հատարելապէս գիրանայ, բայց որովհետեւ այդ ժամանակ կենդանեաց ախորժակը փակւում է, այդ պատճառով պէտք է կերակրել փոքրածաւալ սննդարար և ղիւրամարս կերերով:

* Կանաչ աւուոյով անասուններ կերակրելիս եւ կամ երբ վերջններս արածում են աւուոյի դաւերում, պէտք է խիստ զգոյց լինել, որ նոցա որովայնը չուռչի, որից տաւ անգամ անասուններ անցնչանում են: Չոր կերից կանաչ աւուոյի անցնելիս պէտք է չափաւորութիւն պահպանել եւ ասիւնանաբար վարժեցնել նոցա այդ կերին: Այս դեպքում օգտակար է աւուոյի հետ խառն յարդ տալ. վերջնիս քանակութիւնը պէտք է ասիւնանաբար պահպանել, իսկ առաջինը մեծացնել: Ակզբներում նոյն իսկ կարելի է ախոռում նախ մի քիչ չոր կեր՝ խոտ, յարդ տալ, եւ ապա դուրս քեղ դաւել: Առատօքներ, քանի որ աւուոյի վերայ ցօղ կայ, երբեք չպէտք է անասուններին բաց բողնել արածելու. երեկոյեան եւս, երբ ցօղը կրկին երեւան է գալիս, նոյնպէս պէտք է արգելել:

Առաջին օրերում եղջիրաւոր անասուններին աւուոյի դաւերում կարելի է արածացնել 1—2 ժամ եւ ոչ աւելի, յետոյ արդեն այդ միջոցը կարելի է ասիւնանաբար երկարացնել. այնուամենայնիւ երբ աւուոյը դեռ մասաղ է, երկու ժամից աւելի չի կարելի արածացնել: Անպայման վնասակար է կանաչ աւուոյ արածելուց եւ կամ ախոռում նոյնը ուտելուց յետոյ ջուր տալ: Ոչ զարման սկզբներին տաւ վաղ եւ ոչ էլ խոնաւ ցուրտ եղանակներին անասուններին պէտք չէ տանել դաւել կանաչ աւուոյ արածելու: Բայց երբ մի որեւէ պատճառով անասուններ օտպուած է իւր անասուններին բաց բողնել մի տարեկան աւուոյ բուսած դաւում, այն ժամանակ պէտք է ուշադրութիւն դարձնել, որ զարման եղանակը եւ հոգը չոր լինի:

Վերջերք, երբ մայրուհի արդէն բաւականաչափ գիրացել է, տալիս են նաեւ տեսակ տեսակ կոտորած, խոշոր աղացած ու խմորած, նաեւ երբեմն համեղ և եփած կեր, օրինակ՝ մանրած հացահատիկներ, գարեջրի դերտ և այլն: Իսկապէս եղջիւրաւոր անասուններին լաւ գիրացնելու համար պէտք է նոցա կերակրել զանազան սննդարար նիւթերից կազմած խառնուրդներով: միատեսակ կեր տուած ժամանակ կենդանին աւելի ուշ է գերա-նուծ, աւելի շատ ժամանակամիջոց է պահանջում լաւ և առատ միս և ճարպ հաւաքելու*, գերանալու համար: Ընդեղէններից ամենից լաւ են, (եթէ միայն արժան են) ոլորը, լոբիան, սոսքը, և այլն: Այդ բոլորը պէտք է խոշոր աղալ և ապա խոշոր աղացած դարու, վարսակի, կոպտոնի (քուսպ) հետ խառնել, տաք ջրով թրջել կամ եփել ու խմորով շաղախել և այդ վիճակի մէջ, քսան և չորս ժամ լաւ խմորուելուց յետոյ՝ կերցնել: Այս խառ-նուրդից ամէն մի գլուխ անասունին օրական 20—24 գրուան-քայ պէտք է տալ և հետոն էլ նոյն քանակութեամբ խոտ ու յարդ: Եթէ այս վերջին եղանակով երեք ամիս կերակրուեն ա-նասունները, շատ կգերանան և ահագին քանակութեամբ ճարպ կհաւաքեն: Երբեմն տնտեսական պայմանների պատճառով ա-նասնափաճառները (չօգար) բաւականանում են միայն առան-ձին երկու շրջանով. այսպիսի դէպքում բնական է, որ կենդա-նու մարմնի մէջ ճարպ քիչ կհաւաքուի, թէպէտ մօի կողմից բաւական հարուստ է լինում: Եթէ գերացնելու համար ընտրած կենդանին նիհար չէ, կարելի է բաւականանալ վերջին երկու շրջանով:

* Այսեղ յառաջ եմք քերում գիրացնելու համար Ռուսաստանում խիստ տարածուած մի միջոց, որ գործ է դրուում արքեր կերեր տալով. այդ կերերի տալն էս պէտք է բաժանել երեք շրջանների: Ակզբներում 1000 գրուանայ կենդանի կերո-ւնեցող անասունի համար իբրեւ կեր կարելի է օրուել 1¹/₂ վաւր բազուկ (հակրն-դեղ, սակ) կամ 30 գրուանայ եփած կարսոճիլ, 10 գրուանայ յարդ. այդպէս շարունակել մինչեւ որ կենդանին օրու չափով գիրանայ: Վերջերք յիշեալ նիւթերը պէտք է պակասեցնել 1¹/₂-ով՝ տալով 5—7 գրուանայ խոտ, 1—3 գրուանայ քեփ (միայն՝ քէ առաջին եւ քէ երկրորդի մեծ քանակութիւնը պէտք է գործադրուի ա-ռաջին միջոցում, իսկ քիչը վերջին), 4—5¹/₂ գրուանայ փուս (սորս ամենամեծ չափը պէտք է տալ երկրորդ միջոցում), 1—4 գրուանայ հացահատիկներ. այս չափը պէտք է տալ երկրորդ միջոցում, պէտք է տալ առաջին միջոցում, իսկ մեծ վերջին վաւր չափը՝ այն է 1 գրուանան, պէտք է տալ առաջին միջոցում, իսկ մեծ չափը, 4 գրուանան, վերջին, եւ այլն: Օրական կերակրում են երեք անգամ. առա-ւօսուայ 5 ժամին, ցերեկուայ 11 ժամին եւ երեկոյեան 5 ժամին: Առաւօտեան պէտք է տալ օրուած յարդի 1¹/₂ մասը, կարսոճիլի, շաղգամի կամ բազուկի մի օրու մասի հետ եւ խոտի կտր: Կէս օրին պէտք է տալ խոտի մնացած մասը հացահատիկների հետ միասին: Ժամի 4-ին պէտք է ջրել եւ քիչ լեռն մօտաւորապէս ժամի 5-ին կերակրել մնացածով:

Այն երկրներում, ուր լավ արօտատեղիներ կան, մասցու անասուններին կարելի է կանաչ կերով գիրացնել: Բայց եթէ պարարտաբոյս արօտներ չկան, միմիայն աղքատ տեղեր արածացնելով չպէտք է բաւականանալ, որովհետեւ քիչ կգիրանան. այսպիսի դէպքերում երեկոները տանը քիչ բան պէտք է տալ:

Գիրացնելու ժամանակամիջոցը կախումն ունի այն բանից, թէ արգեօք ի՞նչ եղանակով են կերակրում անասուններին. բայց ընդհանրապէս ամենաշատը տեղում է 20—24 շաբաթ: Այս ժամանակամիջոցը զգալի կերպով կարելի է կրճատել, եթէ կենդանու կաղմուածքը սկզբում նիհար չէ եղել: Սոտով և ջրով առատ մարգագետնում ազատ արածող կենդանին 90—100 օրուայ մէջ պէտք է գիրանայ. եթէ այսքան ժամանակամիջոց անցնելուց յետոյ կենդանին չի գիրանում, այդ նշանակում է, որ կամ խոտը սննդարար չէ և կամ կենդանին որևէ պահասութիւն կամ հիւանդութիւն ունենալով, գիրանալու տրամադրութիւն կամ ընդունակութիւն չունի, ուստի պէտք է նախ խոտը փոխել և նայել, թէ արգեօք կենդանու վերայ որևէ փոփոխութիւն յառաջացել է, եթէ ոչ, առանց ժամանակ կորցնելու մորթել՝ աւելի չփնասուելու համար:

Մասցու անասուններ պահելը, մանաւանդ աշնանը կամ ձմրանը, ձեռնտու է այն մարդկանց համար, որոնք կերի մեծ պաշար ունին:

Որպէս զի մեծ եղջիւրաւոր անասունները գիրանան, բացի կերից կարեւոր է նաեւ ուշք դարձնել, որ նոքա պահուին մաքուր օդ պարունակող, մութ և 12°—16° տաքութիւն ունեցող ախոռներում, հեռու ամէն տեսակ աղմուկներից և ազատ աւելորդ շարժումներից և աշխատութիւններից. շատ քիչ անգամ պէտք է դուրս թողնել ման դալու, որպէս զի անօգուտ տեղը սննդարար նիւթեր չփչացնեն: Կարեւոր է, որ կերը կանոնաւոր կերպով արուի, մաքուր և թարմ լինի, իսկ տաղի փռուածքը առատ և չոր: Գիրանալուն նպաստող պայմաններից մէկն է նաեւ նոցա կաշին մաքուր վիճակի մէջ պահելը. դորա համար պէտք է քերելով (ղաշալ) կամ խոզանով մաքրել և կամ լողացնել, որով կսկսի կաշուի զօրեղ գործունէութիւն, և այդ խիստ մեծ ազդեցութիւն է ունենում կենդանու ախորժակի և մարսողութեան վերայ:

Ախորժակ բարձրացնող միջոց է համարւում լողը, որից պէտք է տալ այնքան միայն, որ կերերի համը կարողանայ բարելաւել և կենդանու կենսունակութիւնը կանոնաւոր վիճակի մէջ պահել: Բաւականաչափ քանակութեամբ աղի դործածու-

թիւնը յառաջ է բերում ծարաւ, որը զոյացնելու համար կենդանին կսկսէ շատ ջուր խմել, ուստի և մեծանում է սպիտակուցային նիւթերի փոխանակութիւնը, որոնք կծախսուեն անօդուտ և աննպատակ տեղը: Ահա այս պատճառով շատերը խորհուրդ են տալիս այսպիսի կենդանիներին մինչև անգամ աղ չտալ. միայն երբ կենդանին քիչ և վատ է ուտում, ախորժակը քանալու համար կարելի է քիչ քանակութեամբ տալ:

Եթէ կերը ջրալի է, կարելի է և ջուր չտալ: Չափազանց ջրելը պատճառ կդառնայ սպիտակուցի և զուր ծախսուելուն: Չպէտք է ջրել նաև հատիկաւոր կեր տալուց յետոյ, որովհետև հատիկները կենդանու կղկղանքի հետ միասին չմարսուած դուրս կդան:

Լաւ և առատ կերակրելիս կենդանու քաշը սկզբներում աւելի մեծ չափերով է մեծանում, քան վերջերը՝ երբեմն օրական մինչև 6—7 գրուանքայ: Իմանալու համար, թէ ո՞ր ժամանակուանից սկսած կենդանու քաշը կդադարի աճելուց, պէտք է կշռել, թէպէտ մեր գիւղացիները շատ անգամ իմանում են այդ նաև աչքի չափով:

Այստեղ առաջարկում ենք մի հասարակ և արագ կատարող միջոց: Նախ պէտք է չափել կենդանու երկարութիւնը վերջոյով, ճակատից սկսած մինչև պոչի արմատը, ապա ընի (կրճքի) հաստութիւնը, ճակատից առաջին զոյգ ոտների ետևով մինչև կրկին ճակատը: Ստացուած վերջոյների թիւը պէտք է բազմապատկել, որոնց արտադրեալը ցոյց կտայ, թէ կենդանու կշիւը քանի գրուանքայ է:

Եղջիւրաւոր անասունների գիրութիւնը կարելի է որոշել նաև մի այլ բաւական գործնական միջոցով: Պէտք է շոշափել կենդանու կողերը, պոչի արմատը, ամորձիքը, աճուկները: Այդ տեղերի ճարպի քանակութիւնը որոշելով, գաղափար կարելի է կազմել ամբողջ կազմուածքի մէջ եղած ճարպի քանակութեան մասին. բայց այս միջոցներով կարող են օգտուել միայն բաւականաչափ հմուտ անձինք*:

Ամփոփենք մտացու մեծ եղջիւրաւոր անասունների մասին մինչև այժմ մեր ասածը.

* Լաւ գիրացած, 50 փութ կենդանի կշիռ ունեցող եգր իւր մէջ պարունակում է մօտաւորապէս 2 փութ արիւն. կաթին, զլուխը, ոտները եւ լեզուն՝ 7 փութ. փորակիք՝ 3 փութ. միսը եւ հարպ՝ 30 փութ. ստամոքսում եւ աղիքներում եղածները՝ 8 փութ: Իւրաքանչիւր 100 մաս մսին կհասնի 20—30 մաս ոսկր:

1. Գերացներու համար պէտք է ընտրել պնդակազմ, ծանրակշիռ կենդանի:

2. Հարկաւոր է ընտրել այնպիսի համեղ, գիւրամարո կեր, որ շուտով մարսուում է և մսի ու ճարպի փոխուում: Առաւելապէս օգտակար են՝ հատիկները և արմատապտուղները, մանաւանդ եթէ դոցա հետ տրուի նաև անհրաժեշտ քանակութեամբ խոտ:

3. Պէտք է շուտ շուտ ուտացնել, օրական նոյն իսկ մինչև վեց անգամ, որպէս զի կենդանին հնարաւորութիւն ունենայ հէնց ախորժակ, տալուն պէս ուտել: Խիստ ըարերար ազդեցութիւն է ունենում կերը: Եթէ վերան քիչ աղ աւելացուի:

4. Մտացու անասունը որքան շատ ուտէ, այնքան աւելի օգտակար կլինի տիրոջը, որովհետև նոյնքան տրագ կգիրանայ, և աւելի քիչ ծախք կլինի նորա խնամքի համար:

5. Նիհար և երկար ժամանակ քաղցած մնացող կենդանիներին սկզբներում մի անգամից չպէտք է առատ և թանկագին կեր տալ, որովհետև նոցա ստամոքսը սովոր չէ շատ կեր ընդունելու և մարսելու: Բացի դրանից նիհար կազմուածքը շատ թրթուածին ներշնչելով, խիստ կերպով կսկսէ քայքայել կերից ջուրուած սպիտակուցը:

6. Պէտք է անպայման հանդիստ փնտրել մէջ պահել գիրացող կենդանուն. ախոռը պէտք է տաք և մութ լինի:

Գէորգ Ղազարեան



ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

1902 թուի գիսաւոր աստղերը.—Աստղաբաշխներն այս տարի սպասում են երկու գիսաւորներ Վերադարձին, որոնց կարելի կլինի գիտել նոյեմբեր ամսին: Նրանցից մէկը, Տեմպէլ աստղա-